

ԵՒ ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ (1918-1920 թթ.)

Մարիամ Յովսեփեան

Պոլսահայ գրեթէ բոլոր պարբերականներն այս կամ այն չափով անդրադարձել են Փարիզի խաղաղութեան վեհաժողովի աշխատանքներին, հայ պատուիրակների գործունեութեանը, Սեւրի պայմանագրին եւ յարակից կարեւոր այլ հիմնահարցերի։ Այս յօդուածի շրջանակներում մեր վերլուծութեան համար հիմք ենք ընդունել 1918-1920 թուականներին Կ.Պոլսի առաջատար՝ «Ճակատամարտ» եւ «Ժամանակ» օրաթերթերի հրապարակումները, որոնք այդ բախտորոշ ժամանակահատուածում ոչ միայն պատկերացում են տուել ծաւալուած իրադարձութիւններին, այլեւ նպաստել են իրենց ընթերմասին, այլեւ նպաստել են իրենց ընթերցողների շրջանում հասարակական կարծիքի ձեւաւորմանը։ Դրանցում արտայայտուել են նաեւ կուսակցական տեսակետներ Հայկական հարցի վերաբերեալ, քանի որ մասնաւորապէս «Ճակատամարտը» դաշնակցական ուղղութիւն ունէր, «Ժամանակը» ներկայացնում էր Հայ աւանգարդների կուսակցութեան մօտեցումները։ Պէտք է ասել, որ «Ճակատամարտը» խնդրոյ առարկայ հարցերի մասին պատկերացում է տուել լրագրողական տարբեր ժանրերի՝ լուրի, թղթակցութեան, լեպորտաժի, վերլուծական յօդուածի, հարցազրոյցի միջոցով։ Ընդ որում, դրանք պատրաստուել են առաւելապէս պարբերականի աշխատակիցների ու արտերկրի սեփական թղթակիցների կողմից։ Գերակշռել է սեփական արտադրանքը, թէեւ եղել են նաեւ արտատպումներ Հայաստանեան եւ Ֆրանսիական, անգլիական ու ամերիկեան թերթերից։ «Ժամանակ» օրաթերթում, ընդհակառակը, մեծ թիւ են կազ-

մուսմ հիմնականում ֆորսսիական պարբերականներից վերցրած եւ թարգմանաբար իր էջերում տպագրած լուրերը եւ վերլուծական յօդուածները: Եթէ «Ճակատամարտի» խմբագրականներում շատ են անդրադարձները հայկական պատուիրակութիւնների աշխատանքին, նրանց տարածայնութիւններին, Սեւրի պայմանագրին եւ հայութեան երկու հատուածներում դրա արձագանքներին, ապա «Ժամանակը» դէպքից դէպք էր տեղ տալիս յիշեալ թեմաներին՝ առաւելապէս կուսակցական դիրքերից հնչեցնելով գնահատականներ, ինչը բնորոշ էէր «Ճակատամարտին»: Տեղին է յիշատակել, որ վերջինս մշտապէս կարեւորել է միասնականութեան դերը թէ՛ Փարիզում գործող հայ պատուիրակների, թէ՛ Հայաստանի ու Կ. Պոլսի ազգային կուռոյցների աշխատանքի արդիւնաւէտութեան համար: Այս լոյսի ներքոյ էլ գրուել են օրաթերթի նիւթերը՝ ձգտելով նախապատուութիւն չտալ այս կամ այն գործչին եւ լինել չեզոք՝ անգամ, եթէ գրում էր Աւետիս Ահարոնեանի կամ Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական տեսակէտների մասին: Այնինչ բոլորովին այլ էր «Ժամանակը» մօտեցումը: Հայ պահպանողականների շունչը զգացւում էր ամենուրեք: Իհարկէ, չկային կոնկրետ անձերին վիրաւորող արտայայտութիւններ եւ նոյնիսկ Պօղոս Նուպարը կամ Աւետիս Ահարոնեան, որպէս գործող անձ, երեւում էին պաշտօնական հանդիպումմիայն նրանց պաշտօնական հանդիպումների վերաբերեալ տպագրուած լուրերում: Թերթի կուսակցական դիրքորոշումները չեղտադրւում են մասնաւորապէս Հայաստանի Առաջին հանրապետութեան խորհրտանի

դարանում 1919 թվականի մայիսի 28-ին Միացեալ եւ Անկախ Հայաստանի մասին յայտարարութեան ընդունումից յետոյ:

1918 թվականի հոկտեմբերի 30-ին Մոսկովայի պայմանագրի կնքումից յետոյ Հայաստանի Առաջին հանրապետութիւնը պատերազմի ելքը փաստաթղթային տարբերակներով որոշելու միջազգային գործընթացների մէջ է ներառւում: Այդ մասին լուրեր կային «Ճակատամարտ» եւ «Ժամանակ» օրաթերթերում: Պարբերականում կարդում ենք, որ Ժնեւում գործող Հայկական մամուլի գործակալութիւնը պաշտօնական աղբիւրներից տեղեկացել էր այդ մասին¹: «Ֆրանսա, համախորհուրդ իր դաշնակիցներուն հետ, Հայաստանը ճանչցած է իբրեւ պատերազմիկ եւ դաշնակից պետութիւն: Հայերը առաջին պահէն իսկ յարեցան դաշնակիցներու դատին եւ չորս տարիէն աւելի կռուեցան անոնց կողքին: Հայաստանի ներկայացուցիչներուն, ուրեմն, պիտի թոյլատրուին ամբողջութեամբ Հաշտութեան համաժողովին մէջ»², գրում էր «Ճակատամարտը»: Փարիզի խաղաղութեան վեհաժողովին³ Հայաստանի մասնակցելու մասին տեղեկութիւնը թերթում երկրորդում էր Բաքուի

Հայկական կոմիտէի ստացած հեռագրով, որը տպագրել էին կովկասահայ թերթերը⁴: «Ժամանակի» թղթակիցն իր հերթին ընթերցողներին վստահեցնում էր, թէ զայրանալու կամ յուսահատուելու պատճառ չէր կարող լինել այն, որ Հայաստանը ներկայացուցիչ չունէր համաժողովում. «Հայերը վրդովուելու պատճառ չունին, Հաշտութեան ժողովին մէջ Հայաստանի կողմէ պաշտօնապէս ներկայացուցիչ չգտնուիլը նշմարելով: Այդ պարագան չի նշանակեր երբեք, թէ Հայկական Դատը լքուած է... Ժողովը որոշ յանձնառութիւն մը կ'ընէ՝ զբաղելու «կազմուելու վրայ եղող» պետութիւններու խնդիրներովն ալ, որոնց կարգին նաեւ, անշուշտ, Հայաստանինը, որուն Դատին լքուած ըլլալուն ո՛ր եւ է ո՛չ իրաւական, ո՛չ երեւութական նշան չի կայ՝ ժողովին կ'ողմէ»⁵:

«Ճակատամարտը» բաւական ուժգին է անդրադարձել Հայկական երկու պատուիրակութիւնների գործունէութեանը Փարիզի խաղաղութեան վեհաժողովում: Գերակշռում են, սակայն, Պողոս Նուպարի եւ Նրա Նախագահութեամբ գործող արեւմտահայերի Ազգային պատուիրակութեան աշխատանքները լուսաբանող նիւթերը: Դրանց մէջ արտացոլուած էին Առաջին աշխարհամարտում յաղթած պետութիւնների միջոցով Հայկական հարցը յօգուտ հայութեան լուծուած տեսնելու հայ ժողովրդի յոյսերը: Իհարկէ, հարկւր մեկ տարուայ հեռաւորութիւնից մենք այսօր կարող ենք փաստել, որ թէ՛ մեր պետական այրերը, թէ՛ ազգային ու կուսակցական գործիչները ոչ միայն դիւանագիտական յարաբերութիւնների փորձ չունէին, այլեւ չկարողացան մեծ տէրութիւններին որեւէ

1 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1918, թիւ 37 («Հայաստան կը ճանչցուի իբրեւ դաշնակից եւ պատերազմիկ»):

2 Նոյն տեղում:

3 Փարիզի խաղաղութեան վեհաժողովի ընթացքը տեսել է 1919 թուականի յունուարի 18-ից մինչեւ 1920 թուականի յունուարի 21-ը: Աշխատանքներին մասնակցել են 27 երկրի ներկայացուցիչներ: Հայաստանի Առաջին հանրապետութիւնը, թէեւ չէր ստացել մասնակցութեան պաշտօնական հրաւեր, բայց Փարիզ էր ուղարկել պատուիրակութիւն, որը ղեկավարում էր Աւետիս Ահարոնեանը: Այդ վեհաժողովին մասնակցելու նպատակով այնտեղ էր ուղարկուել նաեւ մէկ այլ՝ Ազգային պատուիրակութիւն, որը պէտք է լսելի դարձնէր արեւմտահայութեան ձայնը: Դրա նախագահը Պողոս Նուպարն էր (տե՛ս Յակոբեան Ա., Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ., Եր., 2018, էջ 116-119, «Հայոց պատմութիւն», Ե., 2010, հ. 4, գ. 1-ին, էջ 144-145):

4 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 39 («Հայաստանի մասնակցութիւնը խաղաղութեան ժողովին»):

5 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիւ 3449 («Հաշտութեան ժողովը. բացումի նիստը»):

կերպ շահագրգռել եւ մնացին միայն խնդրազերեր ուղարկող պետութեան ու ժողովրդի ներկայացուցիչների կարգավիճակում: Այնինչ, պատերազմում պարտուած թուրքիային յաջողութեց կրկին իր կողմը գրաւել թուրքական պետութեան մասնատման մասին խօսող երկրներին, նաեւ նրանց շուտով պարտադրեց ճանաչել սեփական սահմանների անձեռնմխելիութիւնը՝ նորից իրենից կախման մէջ դնելով շահամուլ եւրոպական ու ուսական դիւանագէտներին եւ պետական պաշտօնեաներին⁶:

Արեւմտահայերի Ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարը, որը թէեւ բաւական փորձառու քաղաքական գործիչ էր, բայց, օրինակ, Ֆրանսիական թերթերից մեկին տուած հարցազրոյցում Հայկական հարցի համար կարեւորում էր միջազգային խորհրդաժողովների եւ յաղթանակած պետութիւնների դերը⁷: «Ինչ որ գիտենք, մեզ ենթադրել կուտայ, թէ համաձայնական պետութիւնները մեր իղձերը պիտի ընդունին եւ գոհացում պիտի տան մեր ցանկութիւններուն»⁸, - ահա այսպէս լաւատեսօրէն տրամադրուած՝ յայտարարում էր Պօղոս Նուպարը: Նա երկու հանգամանք էր առանձնացնում.

• «Առաջին կէտ մը, որուն վրայ չենք կրնար զիջիլ, սա է, թէ որ եւ է կերպով եւ որ եւ է պատրուակով չենք ուզեր մնալ թուրք տիրապետութեան տակ,

• մեր երկրորդ բաղձանքը սա է, որ հայկական նոր պետութիւնը, որ հանրապետական ձեւը պիտի որդեգրէ, դրուի մեր ազատարարներուն պաշտպանութեան տակ, որոնք իրենցմէ մեկուն պաշտօն յանձնեն խնամակալ դառնալ մինչեւ այն օրը, ուր մենք, ամբողջապէս կազմակեր-

պուած, ինքզինքնիս կարող զգանք մենք զմեզ կառավարել»⁹:

Պօղոս Նուպարը փարիզեան «Էնֆորմասիոն» թերթում հանդէս էր եկել Ազգային պատուիրակութեան նպատակների եւ հայութեան ակնկալիքների վերաբերեալ ուշագրաւ յայտարարութեամբ¹⁰: Այստեղ եւս նա նշում էր, որ Հայաստանի ճակատագիրը կախուած էր դաշակիցների կամքից. «Անոնք միշտ իրենց համակրութիւնը հաւաստեցին այս մարտիրոս ազգին եւ բազմիցս յայտարարեցին, թէ իր ճակատագիրը ուղղակի կը շահագրգռէ իրենց պատերազմական նպատակները»¹¹: Անուանի հասարակական-քաղաքական գործիչը յատկապէս մեծ յոյսեր էր կապում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հետ, ում ջանքերի շնորհիւ, Նուպարի կարծիքով, Հայկական հարցը դրական լուծում էր ստանալու¹²: Փետրուարի 7-ին Փարիզից ուղարկուած թղթակցութեան մէջ տպագրուած էր Վ. Վիլսոնի պատասխան նամակը հայերի պատուիրակութեանը, որտեղ նա յոյս էր տալիս Հայկական հարցն արդար ճանապարհով լուծելու՝ հայութեան ակնկալիքներին¹³: «Խորհրդաժողովին մէջ հայերը ներկայացուցիչ չունիք, որովհետեւ ազգերու ընտանիքին մաս չէք կազմեր տակաւին: Մեծ համակրութիւն կայ ձեր Դատին համար, եւ կրնաք վստահ ըլլալ, որ ան պիտի պաշտպանուի այնպէս, ինչպէս պիտի ըլլար, եթէ ներկայացուցիչ մը ունենայիք»¹⁴, - գրում էր ԱՄՆ նախագահը: Ընթերցողներն այդ թղթակցութիւ-

9 Նոյն տեղում:

10 Նոյն տեղում, 1919, թիւ 42 («Պ. Պօղոս Նուպարի խօսքը»):

11 Նոյն տեղում:

12 «Ծակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 42 («Պ. Պօղոս Նուպարի խօսքը»):

13 Նոյն տեղում, 1919, թիւ 94 («Դէպի անկախ Հայաստան-Ուիլսոնի պաշտօնական հաւաստիքները»):

14 Նոյն տեղում:

6 «Հայոց պատմութիւն», Գ2. աշխ., էջ 157, 161:

7 «Ծակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 43 («Տեսակցութիւն մը պ. Պօղոս Նուպարի հետ»):

8 Նոյն տեղում:

նից նաեւ տեղեկանում էին այն փաստի մասին, որ ամերիկեան պատուիրակութիւնը յատուկ յանձնախումբ էր ստեղծել¹⁵: Այն սերտորէն պէտք է համագործակցէր հայ պատուիրակների հետ՝ փորձելով դառնալ «հայ պահանջներուն խողովակը հաշտութեան խորհրդաժողովին առջեւ»¹⁶: Իդէպ, թերթի փարիզեան թղթակիցը վստահեցնում էր, որ նմանատիպ մի մասնախումբ էլ որոշել էին կազմել Անգլիայի պատուիրակութեան ներկայացուցիչները¹⁷: Միացեալ Նահանգների նախագահի դրական վերաբերմունքը հայ ժողովրդի պահանջների նկատմամբ դրսեւորուել էր փետրուարի 12-ին արեւմտահայ պատուիրակների համար նրա կազմակերպած ընդունելութեան ժամանակ¹⁸: Նա Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանին եւ պրոֆեսոր Աբրահամ Տէր-Յակոբեանին հաւաստիացրել էր. «Պիտի աշխատիմ ձեր Դատը պաշտպանել: Ես միայն ամերիկացիի մը տիպարն եմ: Դուք գիտէք, թէ որքան բուռն համակրութիւն կայ մեր երկրին մէջ ձեր ժողովրդեան մասին: Մեր ժողովուրդին եռանդուն փափագն այն է, որ ես ապահովեմ ձեր ազգին անկախութիւնը եւ անոր իրաւունքները պաշտպանեմ»¹⁹: Այս հանգիստի մասին լուր կար նաեւ «Ժամանակ» օրաթերթում²⁰: Այն տպագրուել էր Նիւ Եորքում գործող Հայաստանի անկախութեան համար կազմուած Հայկական կոմիտէից ստացած հեռագիրը, որտեղ մէջբերուած էր այդ կազմակերպութեանը Վիլսոնի տուած հետեւեալ խոս-

տումը. «Պիտի ջանամ բոլոր կրցածս ընել հայերուն ի նպաստ»²¹:

Վուդրո Վիլսոնը շուտով ստիպուած էր վերադառնալ Միացեալ Նահանգներ²² այնտեղ ծայր առած հասարակական-քաղաքական ընդվզումների եւ Հայկական հարցի նկատմամբ աստիճանաբար փոփոխուող տրամադրութիւնների ֆօնին²³: Իրադարձութիւնների յետագայ զարգացումը հայամէտ այդ գործչին թոյլ չի տալիս կեանքի կոչել հայութեանն օգտակար լինելու նրա ծրագրերն ու մտայղացումները²⁴: «Ճակատամարտը» պարբերաբար ներկայացրել է այդ ամենը՝ զերազանցապէս լուրի եւ թղթակցութեան ժանրերի միջոցով: Միեւնոյն ժամանակ թերթը շարունակել է հանգամանօրէն ներկայացնել Փարիզի Խաղաղութեան վեհաժողովի ընթացքը, քննարկումները, յատկապէս Հայկական հարցին վերաբերող ելոյթները, զեկոյցները, այդ խնդրով շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ զանգուածային լրատուամիջոցների անցկացրած հարցազրոյցները, Հայկական միացեալ պատուիրակութեան գործունէութիւնը:

Փարիզի Խաղաղութեան վեհաժողովում տեղի էր ունենում ազդեցութեան ոլորտների բաժանում, իսկ հայկական պատուիրակութիւններին, ըստ պոլսահայ վերոյիշեալ օրաթերթերի հրապարակումների, կարծես մտահոգում էին միայն նեղ ազ-

15 Նոյն տեղում:

16 Նոյն տեղում:

17 Նոյն տեղում:

18 Նոյն տեղում, 1919, թիւ 98 («Թրքահայ պատուիրակները Ուիլսոնի մօտ»):

19 Նոյն տեղում:

20 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիւ 3463 («Ուիլսոն եւ հայերը»):

21 Նոյն տեղում, 1919, թիւ 3461 («Ամերիկայի Գալապոսիս խոստումը հայերուն համար»):

22 Գասպարեան Կ., Համընդհանուր խաղաղութեան յղացքը եւ Վուդրո Վիլսոնի արտաքին քաղաքական հայեցակարգը, ատենախօսութիւն, էջ 127-133

(http://etd.asj-oa.am/719/1/Karen_Gasparyan-atenaxosutyun.pdf):

23 Ղազարեան Հ., Սերի պայմանագիրը եւ Վուդրո Վիլսոնի իրաւարար վճիռը Հայաստան-Թուրքիա սահմանաքաժանման վերաբերեալ, Եր., 2012, էջ 395:

24 Խուրշուդեան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թուականին, Եր., 2002, էջ 104-109:

գալին խնդիրներ, առ այսօր անիրականանալի «Ծովից ծով Հայաստան» ունենալու ծրագիրը: Հայաստանի առջեւ, այնինչ, առաջին հերթին ծառացած էին երկրի անվտանգութեան եւ նորաստեղծ պետականութեան պահպանման խնդիրները: Դրանց լուծման ուղիների շուրջ էին հիմնականում վէճեր ծագում Պողոս Նուպարի ու Աւետիս Ահարոնեանի եւ նրանց գաղափարակիցների միջեւ: Այդ անհաշտ միջոցառումը, Նուպար փաշայի մաքսիմալիզմը եւ Աւետիս Ահարոնեանի ծայրայեղութեան հասնող լաւատեսութիւնն խորհրդաժողովի մասնակիցների եւ ղեկավար կազմի համար անընդունելի էին, անգամ, ինչ-որ առումով, ծիծաղելի: Այս կապակցութեամբ ահա թէ ինչ է գրել Գալուստ Գալոյեանը «Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923 թթ.» մեմորանդում մէջ. «Խորհրդաժողովում մեծ տէրութիւնները որքան կարեւոր նշանակութիւն էին տալիս այն հարցին, թէ ում ազդեցութեան ոլորտում պէտք է գտնուէր ապագայ անկախ Հայաստանը, նոյնքան հեզանքով էին վերաբերում հայոց պատուիրակութեան առաջարկներին, որոնք յետագայում Լլոյդ Ջորջի²⁵ կողմից բնութագրուեցին «Պողոսի (Պողոս Նուպար փաշայի) կախարդական հեքիաթներ»... Նոյնպիսի կոչութեամբ էր քննադատում Լլոյդ Ջորջը նաեւ Ա. Ահարոնեանի «կոյր լաւատեսութիւնը»²⁶:

Ընթերցողների համար առանձնապատուկ նշանակութիւն ունէր Փարիզի վեհաժողովում Հայկական միացեալ պատուիրակութեան ներկայացրած յիշատա-

կագրի պատճենի տպագրումը պոլսահայ գրեթէ բոլոր օրաթերթերի էջերում²⁷: Այս փաստաթղթում համառօտ կերպով շարադրուած էին հայութեան պահանջները: Ահա թէ մասնաւորապէս ինչ կէտեր էին ներառուած, ըստ «Ճակատամարտի» բնութագրման, «Հայ ազգային պահանջների ծրագրում»²⁸.

- Անկախ հայկական պետութեան ճանաչում, ընդ որում, այդ երկիրը պէտք է կազմուէր 7 կուսակալութիւններէ, Կիլիկիայի եւ Հայաստանի Առաջին հանրապետութեան տարածքների միաւորմամբ,

- այդ նորաստեղծ հայկական պետութիւնը պէտք է գտնուէր դաշնակից տէրութիւնների եւ Ամն-ի կամ Ազգերի Դաշնակցութեան երաշխաւորութեան տակ,

- Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը դաշնակից տէրութիւններից որեւէ մեկին պէտք է մանդատ կամ պաշտօն տար՝ առաւելագոյնը 20 տարով Հայաստանին օժանդակելու եւ օգնելու համար,

- Փարիզի Խաղաղութեան վեհաժողովը պէտք է նիւթական որոշակի գումարի ճամփով հատուցում սահմանէր՝ դարմանելու համար ջարդերի, կողոպուտների, աւերումների եւ տարագրութեան հետեւանքով հայ ժողովրդի կրած վնասները,

- Հայաստանը պէտք է պատրաստ լինէր կրելու պատերազմից առաջ «քոնսոլիտէ» եղած օսմանեան հանրային պարտքի իր բաժինը,

- Հայաստանի մանդատը վերցնող պետութիւնը պէտք է ստիպէր հայերի հողամասերը գրաւած թուրք-թաթարական իշխանութիւններին հրաժարուել դրանցից, պէտք է զինաթափէր նրանց, պատժէր կո-

25 Բրիտանացի յայտնի ֆասարակական-քաղաքական գործիչ, դիւանագետ Դէյվիդ Լլոյդ Ջորջը Մեծ Բրիտանիայի վարչապետն է եղել 1916-1922 թթ. եւ ի պաշտօնէ ընդգրկուել է Փարիզի Հաշտութեան վեհաժողովի ցերեկայացուցչական մարմնի կամ Անտանտի Գերագոյն խորհրդի կազմում:

26 Գալոյեան Գ., Հայաստանը եւ մեծ տէրութիւնները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 88:

27 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 111 («Համազգային պատուիրակութեան յիշատակագիր»):

28 Նոյն տեղում:

ղոպուտին մասնակցած եւ հայ զոհերի լքուած գոյքը իւրացնողներին,

- արեւմտահայ գաւառից պէտք է վտարէր համիդեան ու երիտթուրքական վարչակարգերի կողմից այնտեղ բնակութեան համար բերուած մուհաճիրներին կամ իսլամ դաւանող զանգուածներին, վաչկատու ցեղերին եւ կարգազանցներին,

- պէտք է ձեռնարկէր միջոցներ՝ բռնի իսլամացուած հայ կանանց, տղամարդկանց, երեխաներին եւ մասնաւորապէս հարեմներում պահուող հայուհիներին հայ համայնքին վերադարձնելու ուղղութեամբ²⁹:

Համազգային պատուիրակութեան նշուած յիշատակագրում առաջարկուած էր թուրքիային պարտաւորեցնել, որ այն յանձն առնէր ու վճարէր հայերից բռնագրաւուած գոյքի եւ ունեցուածքի փոխարժէքն ու հայ իրաւատէրերին տրուելիք որոշակի տուգանքը՝ վերահաստատելով հայկական անշարժ կալուածքները (եկեղեցիներ, վանքեր, վարժարաններ) դրանց նախկին տեղերում՝ ետ վերադարձուած դրանց հողատարածքով ու գոյքով, որոնք բռնագրաւել էին հայ հասարակութիւնից³⁰:

Համահայկական պահանջների այս ծրագրում լուծում էր նախատեսուած նաեւ անժառանգ մնացած հայերի ազգային եւ անհատական գոյքերի յետագայ ճակատագրի հարցի համար: Ըստ այդմ, դրանք պէտք է յանձնուէին Կ. Պոլսի հայ կրօնական իշխանութիւններին, որոնց իրաւունք էր տրուելու դրանք գործածել կամ վաճառել եւ ստացած արդիւնքով հոգալ իրենց հոգեւոր համայնքի կարիքները³¹: Տարագիր կամ օտար ափերում բնակուող հայերին թոյլ պէտք է տրուէր որ 5 տարուայ

ընթացքում նրանք կամ նրանց զաւակները դառնային «հայ քաղաքացիներ»³²:

Պահանջների յիշեալ յիշատակագրի վերջաբանում այն կազմողները յայտնում էին հայութեան լիակատար վստահութիւնը Փարիզի խաղաղութեան համաժողովի «արդարապաշտ» ոգուն՝ չտարակուսելով, որ «ան պիտի նուիրագործէ իրենց ազգային պահանջներուն այս ծրագիրը»³³:

«Ժամանակ» օրաթերթն երկու համար³⁴ էր յատկացրել համահայկական յիշատակագրին՝ կարծիք յայտնելով, թէ իր ընթերցողները «գերազանց շահագրգռութիւնով մը պիտի ողջունեն այս պատմական մեծ արժէքով վաւերացուողը, որով այնքան հետաքրքրուած է ամեն հայ միտք եւ որ կոչուած է ամենէն մեծ դերը կատարելու Միացած Անկախ Հայաստանի ճակատագիրին վրայ, յիշատակագիրը կը լուսաւորէ հայութիւնը մտատանջող բոլոր խնդիրները՝ բանաձեւելով հայ ազգին բաղձանքները»³⁵: Յատկապէս կարեւորուած էր փաստաթղթի այս հատուածը, որն, ի դէպ, չի կորցրել իր արդիական հնչեղութիւնը. «Հայկական խնդիրը լոկ տեղական եւ ազգային խնդիր մը չէ: Ան կը շահագրգռէ Եւրոպայի խաղաղութիւնը եւ իր լուծումէն կախում պիտի ունենայ խաղաղումը, առաջդիմութիւնը եւ բարգաւաճումը մօտաւոր Արեւելքի»³⁶:

32 Նոյն տեղում:

33 Նոյն տեղում:

34 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիւ 3473 («Իշխան Պողոս Նուպարի եւ Աւետիս Ահարոնեանի ներկայացուցած յիշատակագիրը խաղաղութեան համաժողովին, մաս 1-ին»), 1919, թիւ 3474 («Իշխան Պողոս Նուպարի եւ Աւետիս Ահարոնեանի ներկայացուցած յիշատակագիրը խաղաղութեան համաժողովին, մաս 2-րդ»):

35 Նոյն տեղում, 1919, թիւ 3473 («Իշխան Պողոս Նուպարի եւ Աւետիս Ահարոնեանի ներկայացուցած յիշատակագիրը խաղաղութեան համաժողովին, մաս 1-ին»):

36 Նոյն տեղում:

29 Նոյն տեղում:

30 Նոյն տեղում:

31 Նոյն տեղում:

Դրական տրամադրուածութեամբ եւ մեծ յոյսերով էր Փարիզ գործուղուել Հայկական միացեալ պատուիրակութիւնը, թէեւ ամիսներն ու տարիներն անցնում էին՝ նրանց համար բերելով դաշնակից պետութիւններից հիասթափուելու բազում պատճառներ: Իհարկէ, հայ դիւանագէտ այս եւ Հայաստանի Առաջին հանրապետութեան հասարակական-քաղաքական այլ գործիչները վաղուց պէտք է դասեր քաղած լինէին եւրոպական պետութիւնների, Ռուսաստանի, Միացեալ Նահանգների, Թուրքիայի հետ յարաբերութիւնները կառուցելիս եւ Հայկական հարցը դիւանագիտական սեղանին դնելիս: Չէ՞ որ խաղաղըրոյք կատարելու համար հայ ժողովուրդն ու հայոց պետութիւնը չունէին անհրաժեշտ նիւթական միջոցներ եւ պահանջուող այլ հանգամանքներ: Յամենայն դէպս, կամաց-կամաց տրամադրուածութիւնը եւ աշխարհաքաղաքական հանգամանքները փոխւում են՝ ի վնաս հայութեան ու Հայաստանի: Ի դերեւ են լինում Փարիզում համաժողովին մասնակցող հայկական երկու պատուիրակութիւնների յոյսերը, ջուրն են լցւում նրանց բոլոր անպտուղ ջանքերը: Երկփեղկւում են անգամ այդ պատուիրակութիւններն իրենց հետապնդած նպատակներով: Բնականաբար, այս իրադարձութիւններին անմասն չէր մնում «Ճակատամարտ» օրաթերթը: Յատկապէս ուշագրաւ էր «Հայկական դատը Հաշտութեան ժողովին առջեւ» վեց մասից բաղկացած վերլուծական յօդուածաշարը³⁷, որտեղ մանրամասն պատկերացում էր տրւում համահայկական պատուիրակութեան պահանջների մասին, ինչպէս նաեւ հիմնաւորապէս հերքւում էին թուրքական պատուիրակութեան կողմից Փարիզի Հաշտութեան համաժողովին ներկայացուած կեղծ թուային տուեալները եւ հայ ժողովր-

դի նկատմամբ թուրքական պետութեան վարած քաղաքականութեան վերաբերեալ իրականութեանը չհամապատասխանող «փաստերը»: Առանձին յօդուածաշար էլ նուիրուած էր Կիլիկիայի ճակատագրի կապակցութեամբ Հայկական միացեալ պատուիրակութեան պահանջներին³⁸:

«Ճակատամարտը» 1919 թուականի յունիսին 2-ին ուշագրաւ հարցազրոյց էր տպագրել Փարիզի Հաշտութեան համաժողովի Հայկական միացեալ պատուիրակութեան անդամների հետ առնչուած եւ այդ քաղաքում տեղի ունեցած արեւմտահայերի առաջին համագումարին իբրեւ Կ.Պոլսի ներկայացուցիչ մասնակցած Արմենակ Բարսեղեանի հետ³⁹: Այդ զրոյցներում շեշտւում էր այն միտքը, որ մինչեւ յունիսի վերջ պէտք է իր լուծումն ստանար Հայկական հարցը: Ա. Բարսեղեանը մասնաւորապէս ասում էր. «Հայկական հարցը շատ լաւ վիճակի մէջ է: Մեր խնդիրը շահուած է արդէն ամիսներ առաջ: Պիտի ունենանք միացեալ եւ անկախ Հայաստան մը, վեց նահանգները, Տրապիզոնը եւ Կիլիկիան»⁴⁰: Նա նաեւ համոզմունք էր յայտնում, որ Հայաստանի մանդատը Ազգերի ընկերակցութիւնը յանձնելու էր ԱՄՆ-ին, որտեղ անգամ Ծերակոյտի անդամները համակրանք ունէին հայոց խնդրի նկատմամբ⁴¹: Ա. Բարսեղեանը ոչ պաշտօնական հաւաստիացումների հիման վրայ ասում էր, որ հայկական պատուիրակութիւնն այն հաստատ համոզումն ունէր, թէ «իր կողմէ Հաշտութեան համաժողովին ներկայա-

37 Այդ յօդուածաշարը լոյս է տեսել «Ճակատամարտ» 1919 թուականի համապատասխանաբար 115-118, 120, 121 համարներում:

38 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 128 («Հայկ. պատուիրակութեան պատճառաբանութիւնը Կիլիկիոյ մասին») (մաս 1-ին), 1919, թիւ 130 («Հայկ. պատուիրակութեան պատճառաբանութիւնը Կիլիկիոյ մասին») (մաս 2-րդ):

39 Նոյն տեղում, 1919, թիւ 170 («Դէպի ամբողջական եւ անկախ Հայաստան»), 1919, թիւ 172 («Ազգային պատուիրակութեան գործունէութիւնը»):

40 Նոյն տեղում, 1919, թիւ 170 («Դէպի ամբողջական եւ անկախ Հայաստան»):

41 Նոյն տեղում:

ցուած հայկական պահանջներու քարտէսը եթէ ոչ նոյնութեամբ, գոնէ մեծագոյն մասով իրականութիւն պիտի գտնէ»⁴²: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ դիւանագիտական ոլորտում հայ պատուիրակները չէին կարողանում սթափ եւ իրատեսական գնահատականներ տալ Հայկական հարցին առնչուող իրողութիւններին, Փարիզի խաղաղութեան վեհաժողովին մասնակցող պետութիւնների վարած քաղաքականութեանը եւ որդեգրած մարտավարութեանը: Ա. Բարսեղեանը, սակայն, մատնանշում էր, իր կարծիքով, համահայկական պատուիրակութեան անարդիւնաւէտ գործունէութեան երկու պատճառ՝ դրամական միջոցների անբաւարարութիւնը եւ Հայաստանից հեռու, մեկ այլ երկրի մայրաքաղաքում բուն աշխատանքը ծաւալելը⁴³:

«Ժամանակ» օրաթերթը նոյնպէս տպագրել էր հարցազրոյցներ Կ.Պոլսում գործնական այցով գտնուող այն անձանց հետ, որոնք Փարիզում հանդիպել էին Միացեալ պատուիրակութեան անդամներին: Պարբերականի՝ Փարիզում աշխատող սեփական թղթակիցների հարցազրոյցները վերջիններս հետ իրենց կարեւոր տեղն էին գտել «Ժամանակի» էջերում: Օրինակ՝ 1919 թուականի յուլիսին թերթում հարցազրոյց կար Փարիզի հայկական խորհրդաժողովի պատուիրակ Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանի հետ, որն արդէն վերադարձել էր Կ.Պոլիս⁴⁴: Նա որեւէ խօսք չէր ասել Հայաստանի Առաջին հանրապետութեան պատուիրակութեան աշխատանքների մասին, բայց զրուատանքով էր յիշատակել Պօղոս Նուպարին, ինչը միակողմանի պատկերացում էր տալիս ընթերցողներին իրավիճակի վերաբերեալ: Սրբազանը մասնաւորապէս

ասել էր հետեւեալը. «Իշխան Պօղոս Նուպար կատարելապէս իր գործին նուիրուած անձնաւորութիւն մըն է»⁴⁵:

Հարցազրոյցներից մեկը բուլղարահայ փաստաբան Ս. Հինդլեանի հետ էր, որը Ֆրանսիայի մայրաքաղաքում մասնակցել էր Արեւմտահայ խորհրդի կազմակերպած համաժողովին, հանդիպումներ էր ունեցել հայկական պատուիրակութեան անդամների հետ եւ եկել էր Կ.Պոլիս: Նա յիշատակութեան արժանի էր համարում այն հանգամանքը, որ հայկական երկու պատուիրակութիւնները համատեղ, այլ ոչ թէ անջատ-անջատ էին յիշատակադիրը ներկայացրել խաղաղութեան վեհաժողովում, քանի որ միասին պէտք է հետապնդէին «միացեալ Անկախ Հայաստանի Դատը»⁴⁶: Հինդլեանի կարծիքով՝ Հայկական հարցի լուծման համար էական նշանակութիւն էին ունենալու հայկական պատուիրակութիւնների ներկայացրած յիշատակագիրը եւ Միացեալ Նահանգների նախագահ Վ. Վիլսոնի տրամադրուածութիւնը, որն արտայայտուել էր նրա հետեւեալ արտայայտութեան մէջ. «Հայերը ապահովաբար պիտի ունենան իրենց հայրենիքը, իրենց գծած սահմաններով»⁴⁷: Գրեթէ մեկ տարի անց Հինդլեանը մեկ այլ հարցազրոյցում բաւական վիճաբարօրոյց տեսակէտ էր արտայայտել, որին չէր հակադարձել թերթի թղթակիցն՝ այդպիսով կարծես իր համակարծիք լինելը ցոյց տալով: Անդրադառնալով Սեւրի դաշնագիրը միայն Ա. Ահարոնեանի կողմից ստորագրուելու փաստին՝ նա ասում էր. «Դաշնագիրը պ. Պօղոս Նուպարի կողմէ չստորագրուելը թուրք դիւանագիտութեան մեկ յաղթանակն էր, որովհետեւ այսպէսով անիկա կը յաջողի Հայկական հարցը փակել իր հողա-

42 Նոյն տեղում:

43 Նոյն տեղում, 1919, թիւ 234 («Փարիզի Ազգ. Պատուիրակութիւնը եւ Հայաստանի Հանրապետութիւնը»):

44 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիւ 3559-3560 («Տեսակցութիւն մը Դուրեան Ա.ի հետ»):

45 Նոյն տեղում:

46 Նոյն տեղում, 1919, թիւ 3520 («Տեսակցութիւն մը պ. Ս. Հինդլեանի հետ»):

47 Նոյն տեղում:

մասին մէջ»⁴⁸։ Պէտք է փաստենք, որ անուանի փաստաբանը եւ թերթի խմբագրութիւնը, փաստօրէն, չէին կարողացել իրապէս, իրատեսօրէն գնահատել այդ կարեւոր միջազգային փաստաթղթի դերն ու իրական նշանակութիւնը Հայկական հարցի եւ հայ ժողովրդի ճակատագրի համար։ Նոյնը չի կարելի ասել «Ճակատամարտ» օրաթերթի համար, որտեղ իրատեսական հոդի վրայ էին արուել այս պատմական արժէք ունեցող փաստաթղթի հետ կապուած վերլուծութիւնները։

Երկու օրաթերթերը, թէեւ տարբեր համամասնութեամբ, բայց անդրադարձել էին Փարիզում գործող Հայկական պատուիրակութիւնների միջեւ եղած հակասութիւններին եւ հակամարտութեանը։ Իսկ դրանց հիմքում ընկած էին թէ՛ անձնական նկրտումները եւ առաջինը երեւալու ցանկութիւնը, թէ՛ գաղափարական տարաձայնութիւնները։ «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ. վերնագրով գրքում Արարատ Յակոբեանը, վերլուծելով պատուիրակութիւնների միջեւ առկայ անհամաձայնութիւնները, նշում էր, որ ի սկզբանէ նրանք միասնական պէտք է լինէին՝ համատեղ ջանքերով նպաստելով Միացեալ Հայաստանի գաղափարի իրականացմանը։ «Եթէ հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցութիւնը, Հայաստանի պատուիրակութիւնը հանդէս էին գալիս համեմատաբար չափաւոր պահանջներով՝ առաւելագոյնը արեւմտահայ վեց նահանգ, իսկ նուազագոյնը՝ երեք նահանգ՝ ծովային ելքով, ապա Ազգային պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպար փաշան, Հայ ս. ռամկավարները, նրանց գաղափարակից ու ձայնակից Հովհան, որը կոալիցիայի մէջ էր ՀՅԴ հետ, ինչպէս նաեւ գաղութահայ Ս.դ.հնչակեանները պահանջում էին Ծովից ծով

Հայաստան՝ թուրքահայ եօթ նահանգներ՝ Կիլիկիայի չորս սանջակների հետ միասին»⁴⁹, կարգում ենք այդ մենագրութեան մէջ։ Պատմաբանը շեշտում էր, որ Նուպար փաշան եւ արեւմտահայ ռամկավարները միմեանցից տարանջատում էին Տաճկահայ դատը եւ Ռուսահայաստանի հարցը՝ գտնելով, որ սկզբնապէս անհրաժեշտ էր հասնել Արեւմտեան Հայաստանի, այդ թւում՝ Կիլիկիայի անկախութեանը։ «Մեր կարծիքով՝ Պօղոս Նուպար փաշայի, Հայ ռամկավարների ու Հայ ժողովրդականների սխալն այն էր, որ կարեւորութիւն չտալով Հայաստանի Հանրապետութեան գործօնին, որի առանցքի շուրջ հէնց պէտք է միաւորուէին հայկական միացեալ հոդերը, եւ ստեղծուէր Միացեալ եւ Անկախ Հայաստան, նրանք Արեւմտեան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից եւ Միացեալ, Անկախ Հայաստան ասելով՝ հասկանում էին տաճկահայ նահանգները եւ Կիլիկիան միասին։ Վերջիններիս յաւակնութիւններից մեկն էլ այն էր, որ նրանք ապագայ Միացեալ Հայաստանի կառավարութեան ղեկին տեսնում էին միայն իրենց պաշտելի Պ. Նուպար փաշային՝ նրա գլխավորութեամբ»⁵⁰։

Աւետիս Ահարոնեանի նամակներից կարելի է գալ այն եզրակացութեան, որ հանրապետութեան ղեկավարները փարիզեան բանակցութիւններում յաջողութեան հասնելու նպատակով որոշել էին չսրել յարաբերութիւնները Պօղոս Նուպարի հետ։ Նա Ալեքսանդր Խատիսեանին Նուպարի մասին գրել էր հետեւեալը. «Երբ նա զգում է, որ իշխանութիւնը ձեռքից գնում է, ընդունակ է ամենավատ արարքների, մինչեւ յանցանք։ Ահա թէ ինչու միակ ելքը մենք նկատում ենք, այս դրութիւնից դուրս գալու, համաձայնութեան մէջ է՝

48 Նոյն տեղում, 1920, թիւ 584 («Տեսակցութիւն մը Բարիզի համագումարի պուկարաճապ պատուիրակ տըք. Հիմդէանի հետ»)։

49 Յակոբեան Ա., Գ2, աշխ., էջ 118։

50 Նոյն տեղում, էջ 119։

այս շատ վտանգալոր ծերունու հետ»⁵¹։ 1919 թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի կառավարութիւնը Պօղոս Նուպարին այդ բովանդակութեամբ նամակ էր ուղարկել, որտեղ առաջարկել էր յանուն համազգային մեծ երազի՝ մի կողմ թողնել բոլոր խանգարող հանգամանքներն ու ցանկութիւնները։ Մէջբերենք մեկ հատուած. «Ինչ էլ լինի Ձեր վճիռը, Դուք միջոցներ ձեռք կ'առնէք Ձեր հեղինակաւոր ազդեցութեամբ թոյլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որ արտաքին աշխարհում այնպիսի տպաւորութիւն կը թողնի, որ իբր թէ մեր մէջ գոյութիւն ունի էական անհամերաշխութիւն ու պայքար ազգային-քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ։ Ընդհակառակը, մօտիկ ծանօթութիւնը Ձեր ներկայացուցիչների հետ ցոյց տուեց, որ Հայաստանի քաղաքական այսօրուայ ճակատագրին վերաբերող գլխաւոր հարցերի նկատմամբ մեր մէջ հայեացքների նոյնութիւն է տիրում, եւ նկատուող անհամաձայնութիւնն աւելի շուտ արդիւնք է փոխադարձ անվստահութեան, ինչ որ դժուար չալիտի լինի վերացնել գործի ընթացքում»⁵²։

Այս բանավէճերն ու քննարկումներն իրենց արձագանքն էին գտել պոլսահայ մամուլի էջերում։ «Մենք անժամանակ եւ անօգուտ կը գտնենք այդ վէճերը։ Անձնաւորութիւններու վերագրածները մեզի չեն հետաքրքրեր։ Երբ հարցը անձնական հանգամանքէն դուրս կ'ելլէ, կը մնայ հետեւեալը. Հայաստանը միացեալ եւ անկախ, Հայաստանի հանրապետութիւն մը գոյութիւն ունի, որ լաւ, թէ վատ, մեր իրականութեան միակ ուժն է եւ միակ իրական երկիրը։ Մենք այդ կ'ընդունինք

որպէս կորիզը մեր պետութեան»⁵³, «Ճակատամարտ» օրաթերթում գրում էր Կարօ Սասունին։ Նա կարծում էր, որ Հայաստանի կառավարութիւնն ու խորհրդարանը կարող էին կազմուել արեւմտահայերի եւ արեւելահայերի հաւասար մասնակցութեամբ կամ՝ մեկի ու միւսի առաւելութեամբ, տարբեր կուսակցութիւնների անդամներով. «Միայն ըլլան միացեալ խորհրդարան, միացեալ կառավարութիւն, միացեալ դիւանագիտութիւն եւ միացեալ դիմադրութիւն։ Առանց այս հաւաքական ուժին՝ մենք չենք կրնար դիմադրել մեր բազմաթիւ թշնամիներուն»⁵⁴։ Յօդուածագիրը ճշգրիտ էր համարում որոշ անհատների անձնաւորուած պայքարը ապագայ միացեալ Հայաստանի վարչապետի պաշտօնի համար այն դէպքում, երբ կրկին պատմութեան նժարին դրուած էր հայ ժողովրդի գոյատեւման ծանր կշռաքարը⁵⁵։ «Վէճի անհատական, կուսակցական բնոյթ կրելը աւելի կը հաստատուի, երբ նկատի առնենք Փարիզ հրատարակուող «Ժողովուրդի ձայն» թերթին յուլիս 31-ի խմբագրականը, որով կը հաւաստէ, թէ Փարիզի երկու պատուիրակութեանց միջեւ համաձայնութեան բոլոր կէտերը ճշտուած են։ Միայն թէ, կ'աւելցնէ, վէճի նիւթը սա կէտն է, որ Ազգ. պատուիրակութեան նախագահը եւ Հայաստանի վարչապետը կրնան միեւնոյն անձնաւորութիւնը ըլլալ։ Ուրեմն...մնացած է այն հարցը, թէ պ. Պօղոս Նուպար կրնա՞յ իր վրայ կեդրոնացնել վարչապետի եւ պատուիրակութեան նախագահի պաշտօնները»⁵⁶, հանգամանօրէն բացատրում էր Սասունին։ Նա դիմում էր այս խնդրում երկու պատուիրակութիւններին կամ զաղափարական երկու

51 «Դաշնակցական կառավարութեան դոկումենտներից։ 1-ին. Ա. Ահարոնեանի գեկոյց նամակները», Եր., 1922, էջ 24։

52 «Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ.», էջ 146։

53 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 234 («Փարիզի Ազգ. պատուիրակութիւնը եւ Հայաստանի Հանրապետութիւնը»)։

54 Նոյն տեղում։

55 Նոյն տեղում։

56 Նոյն տեղում։

տարբեր մօտեցում ունեցողներին այն կոչով, որ կարողանային գտնել հաշտութեան եզրեր՝ հրաժարուելով պաշտօնամոլութիւնից եւ եսասիրութիւնից, քանզի կենացմահու մարտեր էին մղում Հայաստանի Առաջին հանրապետութեան սահմանների մօտ ու վտանգուած էին հայրենիքը եւ հայ ժողովուրդը⁵⁷:

«Ժամանակ» օրաթերթում սակաւաթիւ են հայկական երկու պատուիրակութիւնների հակասութիւններին վերաբերեալ գրուած նիւթերը: Դա հաւանաբար պայմանաւորուած է եղել այն հանգամանքով, որ խմբագրակազմը բնական էր համարել գաղափարական տարաձայնութիւնները, տարակարծութիւնները: Իրադրութիւնը փոխուել էր, սակայն, Միացեալ եւ Անկախ Հայաստանի մասին ընդունուած յայտարարութիւնից յետոյ, երբ Հայ ռամկավարներն ու նրանց գաղափարախօս «Ժամանակն» իրենց դժգոհութիւնն էին յայտնել: Նրանք անընդունելի էին համարել այն, որ հաշուի չէին առնուել Պօղոս Նուպարի եւ ողջ արեւմտահայութեան տեսակէտները, թէեւ իրականում կրկին առաջ էին քաշել ապագայում կազմուելիք Միացեալ եւ Անկախ Հայաստանում Նուպար փաշայի վարչապետութեան հարցը: Մէջբերենք հատուած նման բովանդակութիւն ունեցող յայտարարութիւններից մեկից, որը Պօղոս Նուպարին էր ուղարկել Հայ ռամկավար կուսակցութեան Կովկասի Կենտրոնական կոմիտէի վարչութիւնը: Ահա թէ ինչ էր գրուած այնտեղ. «Կովկասի սահմաններում ապրող թրքահայութիւնը, ինչպէս նաեւ ռուսահայութեան ստուար մասը առիթով խզուած են, տեսնելով... բռնաբարութան ժողովրդական կամքի եւ իրաւունքի, եւ պահանջում են հայկական կառավարութիւնից օրինականացնել Մայիս 28-ի ակտը՝ անմիջապէս բանակցութեան մտնելով Պարիզի թրքահայ

պատուիրակութեան հետ, որի համաձայնութիւնից յետոյ միայն կազմել Միացեալ Հայաստանի ժամանակաւոր կառավարութիւն եւ պարլամենտ, որոնց եւ տալու է իրաւունք ժամանակաւորապէս վարելու ընթացիկ գործերը, մինչեւ նոր եւ օրինական կառավարութեան կազմուիլը»⁵⁸: Պարբերականում տպագրուած Հայ ռամկավար կուսակցութեան Կ. Պոլսի խորհրդի յայտարարութեան մէջ նշուած էր, որ Հայաստանի Առաջին հանրապետութեան կառավարութիւնն իրենք չէին համարում ամբողջական Հայաստանի կառավարութիւնը, իսկ «թրքահայութեան միակ օրինաւոր եւ իրաւասու մարմինն է Բարիզի Ազգ. պատուիրակութիւնը, Հայ ռամկ. կուսակցութիւնը իր կատարեալ վստահութիւնը կը յայտնէ Բարիզի Ազգ. պատուիրակութեան եւ անոր պատկառելի նախագահ Պօղոս Նուպար փաշային»⁵⁹: «Գործ եւ խօսք» խմբագրականն էլ յանիրաւի էր համարել այն, որ Պօղոս Նուպարն «այնքան անտեղի կերպով քննադատուեցաւ կառավարական կուսակցութիւններու օրականներու կողմէ իշխանութեան բաղձալուն համար»⁶⁰:

Չնայած Փարիզի Խաղաղութեան վեհաժողովին մասնակցող հայկական երկու պատուիրակութիւնների տարաձայնութիւններին եւ անհաշտութիւններին՝ նրանք փորձում էին միաւորել իրենց ջանքերը, թէեւ հազուադէպ էր դա ստացուում⁶¹, օրինակ, երբ 1919 թուականի նոյեմբերին փարիզեան մամուլից տեղեկացել էին Անգլիայի եւ Ֆրանսիայի՝ Հայկական հարցում նոր դիրքորոշման մա-

57 Նոյն տեղում:

58 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1919, թիւ 3559-3560 («Ռամկավարները կը բողոքեն»):

59 Նոյն տեղում, 1919, թիւ 3567 («Յայտարարութիւն Հայ ռամկավար կուսակցութեան»):

60 Նոյն տեղում, 1920, թիւ 584 («Գործ եւ խօսք»):

61 «Հայոց պատմութիւն», մշ. աշխ., էջ 145-148:

սին⁶²: Հայ պատուիրականների համար անակնկալ էր եղել այն, որ այդ պետութիւններն այլեւս չէին ցանկանում նպաստել արեւմտահայերի անկախութեանը եւ թուրքական բռնապետութիւնից նրանց ազատագրմանը. «Նկատի առնուած է թրքական խնդիրը: Անգլիա եւ Ֆրանսա միասին պիտի գործեն անոր համար: Անոնց քաղաքականութիւնը անփոփոխ կը մնայ՝ ազատելու համար թրքական տիրապետութենէն ոչ-թուրք շրջանները եւ զօրաւոր կերպով պաշտպանելու համար այն ազգերը, որոնք, ինչպէս հայերը, ցրուած են բազմաթիւ թուրք նահանգներու մէջ, առանց խօսելու մասնաւորապէս հայկական երկրի մը մասին»⁶³: Ինչպէս տեղեկացնում էր Հայկական տեղեկատու դիւանը, Ա. Ահարոնեանը եւ Պ. Նուպարը Հայկական միացեալ պատուիրակութեան անունից բողոքի նամակ էին ուղարկել Հաշտութեան վեհաժողովին, որն էլ իր էջերում տպագրել էր «Ճակատամարտը»⁶⁴: Այնտեղ մասնաւորապէս գրուած էր. «Հակառակ դաշնակիցներու հակակշռին՝ թրքական տիրապետութիւնը անկարելի պիտի ըլլար Հայաստանի աղետէն վերապրողներու համար: Մենք վստահ ենք, թէ դաշնակիցները այսքան մեծ անարդարութիւն չպիտի գործեն: Անըմբռնելի պիտի ըլլար, որ Արաբիան, Միջագետքը, իսլամական շրջաններ, Սուրիա՝ մեծ մասով իսլամներով բնակուած, ազատագրուին թրքական տիրապետութենէն, իսկ քրիստոնեայ Հայաստանը, ամենէն ճշուած ազգը, չազատագրուի թրքական լուծէն»⁶⁵:

Փարիզի Հաշտութեան վեհաժողովին մասնակցող հայկական պատուիրակու-

թիւնների գործունէութիւնն արդիւնաւէտ կը լինէր, եթէ մի կողմ թողնուէին անձնական նկրտումները, առաջինը կամ անկրկնելին երեւալու սին ցանկութիւնը եւ առաջնային համարուէր անձնականը համապետական շահին ստորադասելու մղումը: Բացի այդ, ինչպէս նշուած ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հրատարակած «Հայոց պատմութիւն» մատենաշարում, այդ միջազգային համաժողովում «հայկական դիւանագիտութիւնը կարող էր շօշափելի արդիւնքների հասնել միայն այն դէպքում, եթէ գործէր միասնաբար եւ ունենար ռազմավարական ու մտաւորական ճիշտ դիրքորոշում»⁶⁶:

Աւետիս Ահարոնեանը, վերլուծելով հայկական երկու պատուիրակութիւնների աշխատանքը եւ մասնաւորապէս Պօղոս Նուպարի հետ պարբերաբար անհամաձայնութիւններ ունենալու դրուագները, իրենց անհամաձայնութիւնների ու վէճերի հիմնական պատճառը համարում էր Նուպար փաշայի փառասիրութիւնը եւ դրանից բխող նկրտումները: Ահարոնեանի կարծիքով՝ դրանք առաւելապէս կտրուած էին իրականութիւնից ու չէին բխում Հայկական հարցին առնչուող հասարակական-քաղաքական իրողութիւններից եւ հայաստանեան իրավիճակից: Հերթական վէճի ժամանակ, երբ փաշան նշել էր, թէ Հայաստանի Առաջին հանրապետութիւնը հնարաւոր է, որ կործանուի, ուստի ինքը պէտք է Փարիզի վեհաժողովում ներկայացնի թուրքահայաստանը, Ահարոնեանն ասել էր հետեւեալը. «Դուք, շարունակելով ձեզ յայտարարել թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ, թուլացնում էք մեր կառավարութիւնը, որ թիւրքական դաշնագիրն իսկ նկատում է որպէս Միացեալ Հայաստանի միակ կառավարութիւնը: Եւ յետոյ դուք շարունակ հակասութեան մէջ էք: Դուք այդ կառավարութիւնը չէք հա-

62 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1919, թիւ 324 («Հայկ. պատուիրակ. բողոքի նամակը Հաշտութեան համաժողովին»):

63 Նոյն տեղում:

64 Նոյն տեղում:

65 Նոյն տեղում:

66 Հայոց պատմութիւն, էջ 148:

մարում համայն Հայաստանի, բայց եւ խաղաղութեան համաժողովում նոյն կառավարութեան բանակին էք յենւում, երբ պէտք է թիւրքաց Հայաստանի հողը գրաւել: Յետոյ, ես լսել եմ, որ դուք փորձում էք անգլիական ու ֆրանսիական կառավարութիւնների միջոցով ձեր դիրքը, իբրեւ թիւրքաց Հայաստանի ներկայացուցիչ, ամրապնդել: Սա լաւ ճամբայ չէ, որ դուք ընտրել էք, ո՛չ ձեզ համար եւ ո՛չ հայ հայրենիքի»⁶⁷: Նա նաեւ տանջանք էր համարել «գործակցել Փաշայի հետ, նորից տեսնուել, նորից ժողովներ անել, դիմումներ կատարել միասին»⁶⁸, քանի որ Նուպարը պահանջում էր ամեն մանրուք իր հետ քննարկել, համաձայնեցնել, ուզում էր իր ստորագրութիւնը լինէր դրանց տակ, իսկ նման պահուածքը միշտ չէ, որ տեղին էր: Պօղոս Նուպարի՝ Միացեալ Հայաստանի կառավարութեան եւ Փարիզի հայկական պատուիրակութեան ղեկավար լինելու երկրի կառավարմանը վերաբերող հարցերում գրեթէ միանձնեայ իշխելու փառասիրական ձգտումները Սիմոն Վրացեանն էլ պայմանաւորում էր նրա քաղաքական ու գաղափարական կողմնորոշումներով: Նաեւ վստահեցնում էր, որ հէնց դրանց պատճառով միասնական դիրքորոշում չէր ձեւաւորուել նոյնիսկ Միացեալ ու Անկախ Հայաստանի մասին 1919 թուականի մայիսի 28-ին Հայաստանի Առաջին հանրապետութեան խորհրդարանի ընդունած յայտարարութեան վերաբերեալ Նուպար փաշայի կողմնակիցների եւ հայկական իշխանութեան ներկայացուցիչների միջեւ: «Նուպարեանների համար մենք նախ եւ առաջ սօցիալիստներ էինք ու յեղափոխականներ, որոնք մեծ պետութիւնների աչքին վստահութիւն չունին: Եւ որովհետեւ նրանց համոզումով Հայաստանի փրկու-

թիւնը միայն մեծ պետութիւններից է կախուած, ապա, ուրեմն, սօցիալիստների մնալը պետութեան գլխին երբեք թոյլատրելի չէր: Բացի այդ, մենք, իբրեւ սօցիալիստներ, պէտք է ձգտէինք որոշ ընկերային բարենորոգումներ իրականացնելու, այնինչ, իրենց ներկայացրած հոսանքը՝ հայ մեծատունների եւ դրամատէրերի շրջանները, որոնց համար Հայաստանը ամենից առաջ նաեւ հարուստ շահաստան է, չէր կարող հաշտուել այն մտքի հետ, որ հայկական պետութեան ղեկը իրենց ձեռքին չգտնուի»⁶⁹, - գրում էր Վրացեանը:

Ամիսներ անց, 1920 թուականի օգոստոսի 10-ին Փարիզի արուարձան Սելրում կնքւում է հայ ժողովրդի դարաւոր երազանքներն ամփոփող պայմանագիրը⁷⁰, որով Արեւմտեան Հայաստանի տարածքների մեծ մասը վերադարձուելու էր հայութեանը: Դրանց գումարուելու էին նաեւ թուրքիայի որոշ հայաբնակ տարածքներ, իսկ Տրապիզոն նաւահանգստով ապահովուելու էր ապագայ Միացեալ Հայաստանի ելքը դէպի Սեւ ծով⁷¹: Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթը պարբերաբար տեղեկատուութիւն էր տպագրել Փարիզում ընթացող հաշտութեան դաշնագիրը կնքելու համար տարուող բանակցութիւնների, դրանցում հայկական եւ թուրքական պատուիրակների ունեցած ներդրման, կազմուելիք փաստաթղթի վերաբերեալ հնչող կարծիքների եւ տեսակէտերի մասին: Օրինակ՝ պարբերականում գետեղուած էր Հաշտութեան համաժողովին թուրքական պատուիրակութեան տուած պատասխանը, որտեղ շեշտուած էր թուր-

67 Ահարոնեան Ա., Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան, Պոսթըն, 1943, էջ 85:

68 Նոյն տեղում, էջ 65:

69 Վրացեան Ս., Բանակցութիւններ Ազգային պատերազմից եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ, Պոսթըն, 1920, էջ 63-64:

70 Հայաստանը միջազգային դիւանագիտութեան եւ սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828-1923), Եր., 1972, էջ 672-683:

71 Պալոյեան Գ., նշ. աշխ., էջ 279-283:

քիայի՝ Արեւելեան նահանգները (այն է՝ Արեւմտեան Հայաստանը) Հայաստանին չյանձնելու պահանջ-ցանկութիւնը⁷²: «Վերջին ժամ» խորագրի ներքոյ ընթերցողներին տեղեկացուած էր, որ «Հաշտութեան համաժողովին տրուած թրքական պատասխանը, շատ մը մերժումներու կարգին, կը մերժէ նաեւ Հայաստանին կցել «Արեւելեան նահանգները»»⁷³: Տպագրել էին նաեւ Թուրքիայի կառավարութեանը Համաժողովի անունից ուղարկուած պատասխանն առ այն, որ «Դաշնակիցները չեն կրնար ո եւ է փոփոխութիւն մտցնել դաշնագրի այն պայմաններուն մէջ, որոնք ազատ Հայաստանի մը ստեղծումը կը տրամադրեն այն սահմաններով, զոր արդար կերպով պիտի ճշտէ Միացեալ Նահանգներու նախագահը»⁷⁴: Թերթում իր անչափ սպասուած տեղն էր գտնել ոչ միայն օգոստոսի 10-ին Սեւրից ստացուած հեռագիրը հաշտութեան դաշնագիրն ստորագրելու մասին⁷⁵, այլեւ օգոստոսի 11-ին Փարիզից Աւետիս Ահարոնեանի ուղարկած հեռագիրը Կ.Պոլսում Հայաստանի Առաջին հանրապետութեան ներկայացուցիչ Պ. Թահթաշեանին⁷⁶: Նա հպարտութեամբ էր գրում, որ ինքն է Հայաստանի անունից ստորագրել հայ ժողովրդի համար այդ պատմական կարեւորութիւն ունեցող փաստաթուղթը. «Սեւրի մէջ մեր դաշնակիցներուն հետ ստորագրեցի Միացեալ Հայաստանի անկախութիւնը նուիրագործող թրքական դաշնագիրը: Այս հանգիսաւոր գործողութիւնը, որ կը ճանչնայ հայ

ազգին ազատութիւնն ու անկախութիւնը, մեր սիրտը կը լեցնէ հրճուանքով ու ջերմագին երախտագիտութեամբ բոլոր անոնց հանդէպ, որոնք փառքով ինկան հայրենիքին համար»⁷⁷: Այն, որ Սեւրի դաշնագիրն ստորագրել էր ոչ թէ արեւմտահայ պատուիրակութեան ներկայացուցիչ Պողոս Նուպարը, այլ արեւելահայ գործիչ Ա. Ահարոնեանը, օրաթերթը համարում էր օրինաչափ, քանի որ, ըստ միջազգային իրաւունքի նորմերի, նա Հայաստանի լիազօր պատուիրակը եւ հայկական միակ պետութեան պաշտօնական ներկայացուցիչն էր Փարիզի Հաշտութեան վեհաժողովում⁷⁸: «Հարցը այն չէ, թէ ստորագրողը ռուսահայ է, թէ՞ թրքահայ, այլ այն, որ մենք ունինք պետութիւն, կառավարութիւն, պատուիրակութիւն, որոնք արտաքին աշխարհին առջեւ կը ներկայացնեն միայն մեկ դատ: Դաշնագիրը ստորագրուեցաւ, բայց անոր տրամադրութիւնները գործադրելու համար ասպարէզ պիտի դան ոչ թէ պատահական մարմիններ, այլ բոլորէն ճանչցուած պետութիւնը, որ շարժման մէջ պիտի դնէ իր գործը եւ ժողովրդական ամբողջ ուժերը»⁷⁹, խմբագրականում այսպէս էր իր տեսակէտը ներկայացնում պարբերականը:

«Ժամանակ» օրաթերթն իր հերթին պատմական օր էր համարել 1920 թուականի օգոստոսի 10-ը, երբ Սեւրում ստորագրուած պայմանագրի հանդիսաւոր արտոգորութիւնը կարծես կոչուած էր «ամբողջ հայ ազգին համար նոր ժամանակներու արշալոյսներ արփաւետելու»⁸⁰: Պարբերականի մասնաւոր թղթակիցը Փարիզից մանրամասներ էր հաղորդել օգոստոսի 15-ին

72 «Ընկալատմարտ», Կ. Պոլիս, 1920, թիւ 506 («Արեւելեան մահաճգնէրը» չեն տար Հայաստանին):

73 Նոյն տեղում:

74 Նոյն տեղում, 1920, թիւ 508 («Դաշնակիցներու վճռական պատասխանը թուրքերուն»):

75 Նոյն տեղում, 1920, թիւ 526 («Վերջապէս ստորագրուեցաւ»):

76 Նոյն տեղում, 1920, թիւ 527 («Հայաստանի կողմէ պ. Ահարոնեան կը ստորագրէ թրք. դաշնագիրը»):

77 Նոյն տեղում:

78 Նոյն տեղում, 1920, թիւ 527 («Ստորագրութիւնը»):

79 Նոյն տեղում:

80 «Ժամանակ», Կ. Պոլիս, 1920, թիւ 570 («Պատմական օր մը Բարիզի մէջ»):

այդ կապակցութեամբ ֆրանսահայերի կազմակերպած միջոցառումներէից, ի թիւս որոնց Հայ Հանրապետական պատուիրակութեան շէնքում տեղի ունեցած պաշտօնական ընդունելութիւնից: Դրանց մասնակցել էին նաեւ Պօղոս Նուպարն ու Աւետիս Ահարոնեանը: Վերջինս իր ելոյթում Սեւրի դաշնագրի կնքումը բնութագրել էր իբրեւ հայոց պետութեան հիմնասիւն: «Ասկէ ետք չկան ո՛չ թրքահայ, ո՛չ ռուսահայ: Ա՛լ դադրի թող մանաւանդ արտասահմանի տգեղ գրապայքարը: Ամեն ինչ երկրի համար եւ երկրի մէջ: Ո՛չ մեկ բան երկրէն դուրս եւ երկրին դէմ... Ապրի՛ Հայաստան»⁸¹: Իր խմբագրականներում թերթն իրաւացիօրէն այն միտքն էր զարգացնում, թէ Սեւրի պայմանագրի կնքումով «Հայկական հարցը դեռ վերջնապէս եւ իրապէս չլուծուեցաւ»⁸²: Հայաստանի Առաջին Հանրապետութեան սպառնացող վտանգներ կային, որոնց շարքում նշում էին սահմանների խնդիրը, բոլշեւիկեան եւ համիւլամական ուժերի յարձակումները: Հայաստանը շարունակում էր գոյապայքար մղել՝ ամփոփուած մնալով «խոստացեալ երկրին մեկ մասին մէջ» ու կրելով տնտեսական ծանր տագնապներ⁸³: «Ժամանակը» գրում էր, որ Հայկական հարցի ծանրութեան հիմնական տրոնը Ամերիկայի Միացեալ Նահանգներն էին: Խմբագրութեան կարծիքով՝ այդ պետութիւնն առայժմ միայն նիւթական օժանդակութիւն էր ցուցաբերել Հայաստանին՝ շարունակ յետաձգելով եւ այդպէս էլ կեանքի չկոչուած խոստումների շարքին դասելով ռազմական ու քաղաքական օգնութիւնը: Այնինչ, Թուրքիան եւ Խորհրդային Ռուսաստանը համատեղ քայլեր ձեռնարկելով՝ լրջօրէն անհանգստացնում էին հայոց երկրի կառա-

վարութեանն ու հայութեան կարող ուժերին. «Նկատի առնելով իրերու եւ դէպքերու վիճակն ու ընթացքը Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ, մենք մեր հարցին վերջնական լուծումը չենք կրնար պատահականութեանց ձգել»⁸⁴: Հայկական հարցի լուծումը պարբերականը մեծապէս պայմանաւորում էր վիլսոնեան սահմանագծման, սակայն՝ ո՛չ ամերիկեան աջակցութեան հետ: Միեւնոյն ժամանակ գիտակցում էր, որ դիւանագիտական ճանապարհով դժուար թէ լուծուէր Վիլսոնեան կամ Սեւրի պայմանագրով նախատեսուած Հայաստանի սահմանների խնդիրը. «Սահմաններու հարցին ամենադժուարին մասը Վիլսոնի կողմէ Հայաստանի սահմանները գծուելէն ետքը, զանոնք գրաւելու խնդիրն է»⁸⁵: Ինչպէ՞ս գրաւել, ո՞ւմ հետ համագործակցել հարցերի պատասխաններն էլ այդպէս էլ չենք գտնում օրաթերթի էջերում:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ, «Ճակատամարտի» խմբագրակազմի համոզմամբ, կարեւոր էր ոսկէ գրիչով⁸⁶ էր ստորագրել Ա. Ահարոնեանը Սեւրի պայմանագիրը, կամ ի՞նչ տեսք ունէր նրա օգտագործած կնիքը⁸⁷: Առաջնահերթն այն էր, որ հայոց նորաստեղծ եւ բազում վտանգներ, թշնամական յարձակումներ դիմագրաւող պետութիւնն առաջիկայում կարողանար կազմակերպուած ձեւով ընթացք տալ այդ փաստաթղթին⁸⁸: Նոյն մտահոգութիւնն առկայ է նաեւ «Ժամանակ» օրաթերթի էջերում, որի խմբագրակազմը, թէեւ ոչ պարբերաբար, բայց անդրադարձել էր ողջ հայութեան համար

81 Նոյն տեղում:

82 Նոյն տեղում, 1920, թիւ 567 («Հայկական հարցին ծանրութեան կեդրոններ»):

83 Նոյն տեղում:

84 Նոյն տեղում:

85 Նոյն տեղում:

86 «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, թիւ 535 («Ինչպէ՞ս ստորագրուեցաւ դաշնագիրը. պ. Ահարոնեանի ոսկեգրիչը»):

87 Նոյն տեղում, 1920, թիւ 529 («Ահարոնեանի կնիքի լուսանկարը»):

88 Նոյն տեղում, 1920, թիւ 527 («Ստորագրութիւնը»):

այդ կարեւոր խնդրին՝ փորձելով առաջարկել լուծման ուղիներ: Այլ հարց է, որ դրանք անարդիւնաւէտ էին, թէեւ ժամանակաշրջանն ինքն էլ անկայուն ու փոփոխական էր եւ պահանջում էր փորձառու դիւանագիտական մօտեցումներ եւ լուծումներ: Իրադարձութիւնների յետագայ ընթացքն այլ ելք էր նախանշել Հայկական հարցի համար: ԱՄՆ-ի ու եւրոպական տէրութիւնների՝ արեւմտահայութեան ճակատագրի հանդէպ ձեռքերը լուանալու պիղատոսեան քաղաքականութիւնը, Հայաստանի խորհրդայնացումը, Թուրքիայում Մուստաֆա Քեմալի իշխանութեան գալը եւ յատկապէս ռուս-թուրքական կապերի առաւել սերտացումն անորոշ ժամանակով յետաձգում են Սեւրի պայմանագրի կենսագործումը: Առ այսօր հայ ժողովուրդը շարունակում է սպասել աշխարհաքաղաքական առումով իր աստեղային

ժամին, երբ հնարաւոր կը լինի կեանքի կոչել Սեւրի դաշնագիրն ու Վուդրո Վիլսոնի իրաւարար վճիռը, որոնցում միջազգային իրաւունքի տեսանկիւնից ճանաչուած են հայութեան իրաւունքներն իր իսկ բնօրրան հայրենիքի նկատմամբ, որը Թուրքիան ժամանակին կարողացել էր բռնազաւթել՝ իրականացնելով Հայոց ցեղասպանութիւնը: Վստահ եմ, որ այս պահանջատիրական պայքարում մեր դատին մեծապէս կ'օգնեն նաեւ Կ. Պոլսի «Ճակատամարտ» և «Ժամանակ» օրաթերթերի՝ վաւերագիր-փաստաթղթերի բազմաթիւ արժէքաւոր հրապարակումները, որոնք վկայում են այդ պարբերականների հայրենանուէր աշխատակիցների հաւատի մասին առ այն, թէ վաղ կամ ուշ վերականգնուելու է պատմական արդարութիւնը Հայկական հարցում, եւ Սեւրի պայմանագիրը դրանում մեծ դեր է խաղալու: